ԳԵՎՈՐԳ ԳՅՈԴԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և հայրենական երաժշտագիտությունը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: 2015 թ. դեկտեմբերի 20-ին վախճանվեց Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչ, տնօրենի խորհրդական, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Շմավոնի Գյոդակյանը:

Գ. Գյոդակյանը ծնվել է 1928 թ. օգոստոսի 12-ին Լենինականում (այժմ՝ Գյումրի): 1928 թ. նա ծնողների հետ տեղափոխվել է Երևան և 1946-ին ոսկե մեդալով ավարտել Երևանի Ֆ. Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցը և Երևանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցը: 1951 թ. Գ. Գյոդակյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական բաժինը (գիտ. ղեկավար՝ պրոֆ. Գ. Տիգրանով), եղել է Ստալինյան կրթաթոշակառու, իսկ 1952 թ.՝ դաշնամուրային բաժինը (պրոֆ. Գ. Սարաջյանի դասարան):

Գ. Գյոդակյանը 1953-1956 թթ. սովորել է Հայաստանի գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայում՝ ուսումնառությունն անցկացնելով Մոսկվայի Պ. Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայում (տեսության ամբիոն, գիտ. ղեկավար՝ պրոֆ. Բ. Յարուստովսկի): 1957-ին նա աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ արվեստների տեսության և պատմության սեկտորում (1958-ից՝ Արվեստի ինստիտուտում)՝ որպես կրտսեր գիտաշխատող: 1960-ին նշանակվել է Արվեստի ինստիտուտի գիտական քարտուղար: Նույն թվականից մինչև կյանքի վերջին օրը Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր:

Գ. Գյոդակյանը 1961 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ռոմանոս Մելիքյան: Կյանքը և ստեղծագործությունը» թեմայով: 1964-ին նրան շնորհվել է ավագ գիտաշխատողի կոչում: 1965 թվականից՝ կես դար շարունակ, արվեստագետը եղել է Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի վարիչը: 1979-2005 թթ. եղել է Արվեստի ինստիտուտի տնօրենի՝ գիտական գծով տեղակալ: 2005-ին Գ. Գյոդակյանը նշանակվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի խորհրդական: 2007-ին ստացել է արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան՝ «Հայ դասական երաժշտության ձևավորման ուղիները» թեմայով պաշտպանելով դոկտորական ատենախոսություն:

Ծանրակշիռ է գիտնականի վաստակը հայ երաժշտության պատմության և տեսության հարցերի ուսումնասիրության ասպարեզում:

Հայրենական երաժշտագիտության կարևոր հանգրվաններից են «Ակնարկ հայ երաժշտության պատմության» ուսումնասիրությունը,որի խորհրդահայ երաժշտության բաժինը հեղինակել է Գ. Գյոդակյանը, ինչպես նաև նրա «Пути формирования армянской музыкальной классики» և «Էջեր հայ երաժշտության պատմությունից» հիմնարար մենագրությունները: Կարևոր նշանակություն ունեցան Տիգրան Չուխաճյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի և հայ երաժշտության մյուս դասականների ստեղծագործության վերաբերյալ նրա գիտական ուսումնասիրությունները:

Անուրանալի է Գ. Գյոդակյանի բազմակողմանի ներդրումը կոմիտասագիտության անդաստանում: Կոմիտասին նվիրված իր հայերեն, ռուսերեն և անգլերեն մենագրություններով և գիտական հոդվածներով նա Կոմիտաս երևույթը դուրս բերեց ազգային շրջանակներից և դիտարկեց XX դարի համաշխարհային մշակույթի համատեքստում: Նրա ջանքերով և գիտական խմբագրությամբ հրատարակվեցին Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 7-14-րդ հատորները:

Հեղինակ է ավելի քան 150 գրքերի, մենագրությունների, գիտական հոդվածների, որոնք լույս են տեսել ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ուզբեկստանի, Գերմանիայի գիտական ժողովածուներում և հանդեսներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական բազմաթիվ գիտաժողովներում:

Ողջ կյանքում Գ. Գյոդակյանը գիտական և գիտակազմակերպական արգասաբեր գործունեությունը համատեղել է հասարակական ակտիվ աշխատանքների հետ: 1959 թվականից Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ էր, 1968-1995 թթ. գործում էր Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության կազմում, այդ ընթացքում լինելով վարչության քարտուղարը՝ երաժշտագիտության գծով (1973-1991 թթ.):

1979-1991 թթ. Գ. Գյոդակյանն ընտրվել է Խորհրդային Միության կոմպոզիտորների միության վարչության անդամ: Մինչ այդ՝ 1973-ին, արժանացել է ԽՍՀՄ կոմպոզիտորների միության «За лучшую музыкально-критическую статью в газетах и журналах 1972 года» մրցանակին, իսկ 2008-ին՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության մրցանակին: 2000 թվականից Հումանիզմի հիմնահարցերի ակադեմիայի ակադեմիկոս էր: 2003-ին և 2013-ին պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ վաստակագրով, իսկ 2005-ին՝ ՀՀ ԳԱԱ պատվոգրով:

Գ. Գյոդակյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ, գիտական կադրերի պատրաստմամբ: 1973-ից նա դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, 1977-ին նրան շնորհվել է դոցենտի, իսկ 1997-ին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ: Երկար տարիներ Գ. Գյոդակյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ էր:

Հայրենիքը բարձր է գնահատել Գ. Գյոդակյանի ծառայությունները: 1980-ին նրան շնորհվել է ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, 2009-ին պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալով, իսկ 2011-ին՝ «Մովսես Խորենացի» մեդալով:

Բարի ու ազնիվ մարդու, երիտասարդ երաժշտագետների համար ճանապարհ բացող գիտության նվիրյալի լուսավոր կերպարը հավերժ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ